

Դ. Գ. ԱՆԱՆՅԱՆ, Եղիշե Չարենցը և ռուս գրականությունը, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979, 342 էջ:

Գ. Անանյանի սույն մենագրությունը արդյունք է գրականագետի երկարամյա տարիների ստեղծագործական պրպտումների: Գրքում ներկայացվում են մեծ բանաստեղծի գրական վաստակի օտարամուտ ակունքները, նորովի բացահայտում սկզբունքային ինչ-ինչ հարցեր ու մեկնակետեր: Հիմք ընդունելով լարենցագիտության նվաճումները, Անանյանը, գրողի ստեղծագործական դիմանկարը համեմատաբար ամբողջական դարձնելու միտումով, մենագրության մեջ անդրադառնում է ռուս գրականության հետ նրա բազմաշերտ ու բազմաբնույթ ազդեցություններին, քանի որ «...լարենցագիտությունը դեռևս դուրս չի եկել ռուս այս կամ այն գրողի ստեղծագործության հանդեպ նրա ցուցաբերած հետաքրքրությունների քննության համեմատաբար նեղ շրջանակներից» (էջ 6):

Առաջաքանում հեղինակը ճշտում է նաև իրեն հետաքրքրող հարցերի ոլորտները և, ինչպես վկայում է գրքի հետագա շարադրանքը, ուսումնասիրության նյութ դարձնում այնպիսի խնդիրներ, որոնք կարիք ունեն խոր ու համեմատաբար ամբողջական հետազոտությունների՝ միաժամանակ բացահայտելով նաև գրողի բազմաբնույթ հոգևոր հաղորդակցությունների ներքին ազդակները:

Գրական առաջին իսկ նախափորձերից Չարենցը կրել է որոշակի ազդեցություն և գրախոսվող աշխատության գլխավոր արժանիքներից է այն, որ գրականագետը բանաստեղծի դրանք աղերսները՝ հատկապես ստեղծագործական առաջին շրջանի, մեկնում ու քննում է ոչ միայն ռուս, այլև ֆրանսիական դրականության հետ ունեցած հոգեհարազատությամբ: Մենագրության էական արժանիքը հեղինակի զգաստ կողմնորոշումն է, նյութի վերլուծության խորությունը, ստեղծագործական ներքին շերտերը թափանցելու կարողությունը: Նմանօրինակ քննությամբ է պայմանավորված նաև գրքի հաջողությունը: Գ. Անանյանը ներկայացնում է Չարենցի՝ սիմվոլիստների հետ ունեցած առնչությունները, 1918 թ. սկիզբ առնող ստեղծագործական նոր ու հզոր միտումները և 1925 թ. սովետահայ պոեզիայի համար մայրուղու նշանակություն ունեցող գրական օրինաչափությունները:

Չարենցի ուսումնառության տարիները պայմանավորված էին առաջին հերթին ժամանակի իշխող գրական մթնոլորտով՝ 10-ական թվականներին լայն տարածում գտած ու աստիճանաբար խորացող սիմվոլիզմի գեղագիտությամբ: Չարենցի առաջին շրջանի ստեղծագործական բնութագրերը գրքում ներկայացվում է ինչպես ռուս սիմվոլիստների (Ա. Ֆետ, Վ. Իվանով, Ֆ. Սոլոգուբ, Պ. Մերեժկովսկի, Ա. Բելի, Վ. Բրյուսով, Ա. Բլոկ և ուրիշներ), այնպես էլ ֆրանսիական պոեզիայի ներկայացուցիչների՝ Ալբեր Սամանի ու Ֆրանսուա Վիյոնի հետ ունեցած առնչությունների կամ հակադրությունների վերհանման ու բացահայտման ճանապարհով, պատկերային հյուսվածքների համադրությամբ ու նրբին դիտարկումներով: Նման մոտեցմամբ էլ բացահայտվում են բանաստեղծի գրական նախափորձությունների շրջանակները և որոշակի պատկերացում տալիս նրա գրական հետաքրքրությունների մասին: Գրողի այս տարիների վաստակը ներկայացնելով ռուս և ֆրանսիական սիմվոլիստների հետ ստեղծագործական խոր խաչաձևումների վերհանման ճանապարհով՝ գրականագետը հավաստում է, որ այդ գեղագիտությունը Չարենցի մոտ ընդունել է որոշակիորեն խորացող ու ծավալվող ընթացք՝ պայմանավորված հատկապես հայ կյանքի պատմական-քաղաքական կացությամբ: «Ավելի շատ սիմվոլիստ, քան Վ. Տերյանը... այդ պատանի բանաստեղծը խորացնում ու լայնացնում էր այդ աշխարհը՝ ...մեզնում սկզբնավորելով նոր մոտիվներ ու գաղափարներ» (էջ 141):

Կյանքի անափ սիրո, ժամանակի գորշ իրականություն հակադրությունից էլ ծայր է առնում պատանի բանաստեղծի հափշտակությունը անորոշ տրամադրությունների, պայթառ ու լուսավոր տեսիլների նկատմամբ: Այդ տարիներին երիտասարդ Չարենցին բնորոշ էին ինչպես հուսախաբության և հոգևոր ամայության պահերը, այնպես էլ կյանքով ապրելու անսանձ ձգտումը: Այս ծանր ու տառապալից երկվության ու մաքառումների նրա վկայություններն առնաձև խոստովանությունն է 1916 թ. գրված «Մարի, էգ թուլուն» լիրիկական բալլադը: Գ. Անանյանի

գնահատմամբ Չարենցի ստեղծագործական այս երկվությունը մի ծայրով խորապես առնչված էր ժամանակի կյանքին, կառչած երկրին, իսկ մյուսով՝ ձգվում էր գեպի անհայտ ու անհասկանալի անսահմանություն:

Բարդ ու հակասական է բանաստեղծի հատկապես 1918—1925 թթ. վաստակը, որը գրքում ներկայացվում է ստեղծագործական հայտնությունների ու կորուստների բացահայտմամբ: Հեղինակը հերոսաշունչ իրադարձություններին համահունչն արվեստ ստեղծելու որոնումներում առավել ակնառու է դառնում Չարենցի հետաքրքրությունը ողու գրականության նկատմամբ: Վաղվա գրականությանը շնչող բանաստեղծին մտահոգում էր ձևավորվող ողու սովետական պոեզիայի հետ համընթաց բայելու պահանջը: Ժամանակի հերոսական օրերին համարժեք պոեզիա ստեղծելու նպատակով էլ նա «Պոեզոգուտնայում» թախծի ու տրամոթյամբ շաղախված տրամադրությունների փոխարեն բերում է խինդ ու ոգևորություն, հայոց բանաստեղծությանը ներարկում կենսական առույզ լիցք և գեղագիտորեն պաշտպանում նմանօրինակ պոեզիայի նշանակությունը վերածնվող հայ ժողովրդի կյանքում: Անանյանի հիմնավորմամբ՝ բանաստեղծական նոր մտայնության ստեղծման «մարտադաշտում» էլ Չարենցը հրապուրվում և շրջանառության է կոչում ողու գրական խմբավորումների պաշտպանած դրույթները:

Չարենց—Մայակովսկի ստեղծագործական ավանդների մասին գրականագիտության մեջ հակասական ու ծայրահեղ տեսակետներ են եղել: Անդրադառնալով Մայակովսկու վաստակի նկատմամբ հայ բանաստեղծի հետաքրքրություններին՝ Գ. Անանյանը միաժամանակ ճշտում, լրացնում ու ամրապնդում է այն՝ հանգելով խոր ու համոզիչ եզրակացությունների:

20-ական թվականների նոր բովանդակության ու արտահայտչամիջոցների ստեղծման շարենցյան որոնումները համընկնում էին Մայակովսկու դավանանքին, որն ամենից առաջ հանդիման էր պոեզիան կյանքով ու պայքարով լիցքավորելու պահանջին, սովետական նոր մարդու և հասարակական կյանքի համատեղ արտացոլման մեթոդին: Մենագրության «Չարենցը և Մայակովսկին» բաժինը ստեղծագործական ներքին շերտերի բացահայտման առումով գրքի լավագույն մասերից է, ուր վարպետ դիտարկումներով գրականագետը անդրադառնում է երկու մեծ բանաստեղծների վաստակի գեղարվեստական առանձնահատկություններին, գրական յուրահատկություններին, ներքին տարածայնություններին և հանգում սկզբունքային ու էական հետևություններին: Չարենցյան խաչավորված հյուսվածքներում Գ. Անանյանը քննում է ողու գրական կյանքին բնորոշ ստեղծագործական այլևայլ ազդեցությունները՝ վեր հանելով հայ բանաստեղծի շեշտված ինքնատիպ ու անհատական դրսևորումները: Այս առումով բնորոշ են Չարենցի պոեզիայի քաղաքացիական պայթյուքի ու քնարականության երակների միաձուլման գրականագետի դիտարկումներն ու մեկնությունները, «Կապկազ թամաշայի» և «Միստերիա-րուֆի» համադրություններն ու բանասիրական պրպտումների արդյունքները, «Ամենապոեմին» և «150 000000» պոեմների աղբյուրների ու ներհակությունների մասին եզրակացությունները: Գ. Անանյանի եզրակացությամբ պոեզիայի քաղաքացիական շնչառության և հայոց լեզվի արտահայտչամիջոցների ընդարձակման նպատակով էլ Չարենցը շրջանառության է կոչում իր ժամանակակցի փորձը, այդ թվում նաև վրիպումները:

20-ական թվականների կեսերից ստեղծագործական նոր շրջադարձ ապրող Չարենցի գրական վաստակը բանաստեղծական հետագա նոր թռիչքների հիմնավոր նախապատրաստություն էր, որի վկայություններն են 1924—1925 թթ. պոեմներն ու բալլադները և 1929 թ. ամբողջացրած «Էպիքական լուսաբաց» ժողովածուն: Չարենցին արդեն գրավում էին էպիկական բարդ ու դժվարին արվեստի բարձունքները, ժողովրդի ազգային նկարագիրն ու հոգեբանությունը բացահայտող, դարի ու ժամանակի հոգսերով ապրող դասական արվեստի մեծերը: Այս առումով էլ պատահական չէ «Էպիքական լուսաբացի» հեղինակային ընտրությունը՝ Պուշկին, Գյոթե, Հայնե, Նեկրասով: Ինչպես այս, այնպես էլ վերջին՝ «Գիրք ճանապարհորդում» բանաստեղծը դասական նոր բարձունքների է հասնում թաղմադարյան հայ բանաստեղծությունը՝ հենվելով հայ ազգային և համաշխարհային գրական լավագույն ավանդների վրա: Ժամանակի ստեղծող ու արարող մարդկային նոր նկարագրի՝ ու հոգեբանության բացահայտման համար էլ Չարենցն օգտագործում էր ողու և համաշխարհային մեծերի արվեստի ավանդները՝ դրսևորելով ստեղծագործական ինքնատիպ ու նորովի մոտեցում: Այս ելակետով են շարադրված գրքի «Չարենցը և Պուշկինը», «Չարենցը և Նեկրասովը» բաժինները, ուր Անանյանը հիմնականում քննում է «Էպիքական լուսաբացի» աղբյուրներն ու առնչությունները ողու դասականների հետ «Պղնձե հեծյալի» և «Չուգունե մարդը» ստեղծագործությունների համադրման, գեղարվեստական ինչ-ինչ հնարանքների հարադատության և էական տարբերությունների բացահայտման

միտումով էլ գրականագետը հանդում է տեսական հիմնավոր հետևության. «Չարենցը ինչ-որ տեղում ելնում է իր նախորդից, բայց և բանավիճում է նրա հետ, լրացնում, նույնիսկ հակադրվում» (էջ 271), Բանավիճելով լրացնելու սկզբունքով է Չարենցը մոտենում նաև նեկրասովյան ավանդներին, ուստի բանաստեղծին բնորոշ կրթությունը ու ներքին ողբերգությամբ անդրադառնալով սեփական. գրական ժամանակավոր սայթաքումներին ու վրիպումներին՝ իր արվեստում շրջանառության կոչելով նրա ստեղծագործական դրույթներու:

Պուշկինյան ավանդներին են առնվում փաստացի-իրական սյուժեներով ստեղծագործությունները, ինչպես նաև էպիգրամներն ու սատիրական բանաստեղծությունները: Հատկանշական են նաև կյանքի վերջին տարիներին Չարենցի անտիպ գործերից «Ան տետրի» սևագիր կամ անավարտ պուշկինյան թարգմանությունները՝ անհուն տառապանքով ու տագնապով ապրող բանաստեղծի ծանր մտորումների հոգեհարազատությամբ:

«Չարենցը և Նեկրասովը» բաժնում գրականագետը հիմնականում ծանրանում է բանաստեղծի կատարած թարգմանությունների վրա, ներկայացնում ու արժեքավորում Չարենց թարգմանչին, Բնագրին համարժեք թարգմանություն ստեղծելու միտումով էլ Չարենցը բառացի ճշգրիտ թարգմանության փոխարեն պաշտպանում է ստեղծագործական ոգուն ու էությունը հարազատանալու միտումը, որը պահպանում ու վերարտադրում է պատումի մթնոլորտն ու նրբերանգը: Այլևայլ տարիների շարանցյալ բաղմամբիվ բարձրարժեք թարգմանությունները պարտագրող կեցվածքով սերունդներին թելադրում են թարգմանչական արվեստի բարձր չափանիշներ:

Պուշկինի և հատկապես Նեկրասովի ավանդների հետ հայ բանաստեղծի ստեղծագործական աղերսները ներկայացնելիս գրականագետը, սակայն, չի հասել նյութի քննության այն խորությունը, որը հատկապես ակնառու է Չարենցի ստեղծագործական առաջին շրջանին կամ Մայտկովսկու հետ ունեցած ընդհանրություններին անդրադառնալիս:

Գիրքն ամփոփող «Չարենցը ուստի գրողների գնահատությամբ» բաժնում հեղինակը բանաստեղծին ներկայացնում է ուստի և եղբայրական մյուս ժողովուրդներին՝ ինչպես իր սերնդակիցների, այնպես էլ ժամանակակից գրողների ընդթափմամբ: Չարենց բանաստեղծը ժամանակի ինքնատիպ ու հզոր անհատականություններից է, որի ստեղծագործությունը ունի արդիական նշանակություն՝ «կենդանի դպրոց բանաստեղծական բոլոր սերունդների, սովետական գրականության կենդանի ընթացքի համար» (էջ 321):

Գ. Անանյանի «Եղիշ Չարենցը և ուստի գրականությունը» դիրքը տարիների աշխատանքի արդյունք է, բառասիրական հայտնությունների ու մեկնությունների արգասիք: Մեծ երախտավորի ուստի գրականության հետ ունեցած վաստակի քննությունը՝ ներքին շարժառիթներից բխող միտումների բացահայտման բարդ ու դժվարին ճանապարհով, նյութի ընդգրկման խորքով ասաջին ամբողջական փորձն է մեզանոս: Թևեռա միայն պետք է ցավել, որ գրականագետը շրջանցել է գրողի արձակը՝ «Երկիր նախին» վեպն ու «Հիշողություններ Երևանի ուղիղ տնից» երկը: Ռուս արձակի հետ շարանցյալ աղերսների բացահայտման առավել ամբողջական կդարձնեն ուստի մեծ գրականության հետ ունեցած Չարենցի ստեղծագործական հոգեհարազատությունը:

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Բաճաթիքական գիտությունների բեկնածու